

քրիստոնէական յիշատակարանաց մէջ, մասնաւորապէս Կապա-
ղովկիոյ՝ վանականութեան այդ ընտիր երկրին մէջ: Վերև յիշե-
ցինք, ի՞նչ կարեւոր գիրք գրուած էին Ե. դարէն սկսեալ հայ-
կական կամ յունա-հայկական դաղութները Պաղեստինի մեծ
վանքերուն մէջ, և Կապաղովկիացիները այս անապատականնե-
րուն մէջ սովորաբար ամենէն նշանաւոր տարրն էին: Ուրեմն
հաւանական պիտի կարծուի թէ Ս. Թէոդոսի այս խիստ համեստ
հելլենագէտ Յովսէփը Կապաղովկիացի հայ վանական մ'էր, որ
իր եկեղեցւոյ նուէր տուած Բագրատեղեան ճրագարանովը աւելի
կը զօրացնէ այս տողերը գրող P. Abel զիտնականին պատմական
հետաւորները: Աւելի դժուարին է գտնել այս նուէրին թուա-
կանը: P. Germer-Durand հնագրօրէն քիչ ժամանակ յառաջ կը
վերագրէր զայն «հինգերորդ դարու երկրորդ կիսուն» (Տե՛ս վե-
րև, էջ 507-509):



Ժ Ա

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1. Ս. Հրեշտակապետի վանքին տեղը.

Կը փափաքինք մեր ընթերցողներուն ծանօթացնել Երուսա-
ղէմի մեր Ս. Հրեշտակապետի վանքը, որ կը գտնուի Հայոց թա-
ղին մէջ, Ս. Յակոբի արևելքը, Երուսաղէմի հարաւային կողմը,
պարսպին մօտ և ոչ հեռի Ս. Փրկչի վանքէն: Այս վանքը, ըստ
սաղիմական պատմիչներու, շինուած է Աննա քահանայապետին
տան տեղը: Աննա պաշտօնանկ քահանայապետ մըն էր, բայց կը
պահէր իր ազգեցութիւնը, թէև իր պաշտօնը նոյն ժամանակ կը
վարէր իր փեսան՝ Կալիափա: Կալանաւորուած մեր Փրկչը Յի-
սուս Աղբիւսաց դուռնէն բերուեցաւ նախ Աննայի քով. «եւ ա-
ծին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կալիափայի, որ քահա-